

Խանջյան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2016 թվականի առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ

«14» Յուլիսի 2016թ.

Գ. Խանջյան

Հարգելի Խանջյան համայնքի բնակիչներ, այսօրվա ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2016 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների, բյուջեի կատարողականի, և առկա հիմնախնդիրների մասին:

Կարծում եմ կծավալվի ակտիվ քնարկում, մտքերի փոխանակում հարց ու պատասխաններ, առաջարկություններ:

Գարնան անբարենպաստ եղանակը ազդեց ծիրանի, դեղձի և սալորի բերքատվության վրա: Սակայն ամեն ինչ արվեց պահպանված ծիրանի սպառման համար:

Մենք կաշխատանք ապահովել 2016 թվականի բյուջեյով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման բարձր տոկոսը:

Խանջյան համայնքի 2016 թվականի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով կազմում է 40.884.4 հազար դրամ:

Առկա բյուջեյով նախատեսված է լուծել Խանջյան համայնքում ծառացած խնդիրները: Խանջյանի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով ունի հետևյալ տեսքը՝

մուտքային մաս

	նախատեսված	կատարված	տոկոս
1. հողի հարկ	8.800.000 հ.դ.	204.0 հ.դ.	%
2. գույքահարկ	2.800.000 հ.դ.	703.8 հ.դ.	%
3. տեղական տուրքեր	200.000 հ.դ.		%
4. ոչ հարկային եկամուտներ	500.000 հ.դ.	50.0 հ.դ.	
ա) հողի վարձավճար	500.000 հ.դ.		
5. դոտացիա	27.776.800 հ.դ.	13.889.0 հ.դ.	%
6. պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա	82.4 հ.դ.		
7. տարեվերջին ազատ մնացորդ			
ա) ֆոնդային մաս	48.9 հ.դ.		

Բյուջեի եկամուտների հավաքագրման տոկոսը կբարձրանա ծիրանի, դեղծի և սալորի բերքահավաքի աշխատանքների ավարտից հետո:

2016 թվականի նախատեսված բյուջեի ծախսային մասը 1-ին կիսամյակում ունի հետևյալ տեսքը՝

ծախսային մաս	վարչական	ֆոնդային մաս
1. տեղական ինքնակառավարում	10.351.4 հ.դ.	
2. գրադարան	436.500 հ.դ.	30.000 հ.դ.
3. կուլտուրայի տուն	1.395.300 հ.դ.	
4. կրթություն	436.500 հ.դ.	
5. մշակութային միջոցառ.	760.000 հ.դ.	
6. աղբահանություն	500.000 հ.դ.	
7. սոցիալական պաշտպանություն	350.000 հ.դ.	
8. Ջրամատակարարում		
9. ճանապարհների վերանորոգում	853.500 հ.դ.	

Խանջյան համայնքում 2016 թվականի 1-ին կիսամյակին կազմակերպվել է մի շարք միջոցառումներ՝

1. Կատարվել է փողոցների և գերեզմանատան միջավայրի սան մաքրում:
2. Կատարվել է դպրոցի վերջին զանգի և կանանց տոնի առիթով միջոցառումներ:
3. Խանջյանի համայնքի սոցյալապես անապահով ընտանիքներին տրվել է սոց. օգնություն:

Հույսով ենք, որ սպասվելիք դեղծի, սալորի և խաղողի բերքահավաքի արդյունքում կապահովենք բյուջեյի եկամուտների կատարման բարձր տոկոս:

Ռազմավարական կտրվածքով Խանջյան համայնքի սոցիալ տնտեսական

վիճակը բարելավելու համար ընտրվել է հետևյալ ուղղվածությունները՝

1. Բուժ կետի շենքային պայմանների բարելավում:
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
3. Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում:

Խանջյան համայնքի ղեկավար



Ս.Ավագյան